Չարենցավան համայնքի ղեկավար
պրն. Հ.Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հայտնում եմ ձեզ, որ Եվրամիության (ԵՄ) «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության կողմից հայտարարված **«Համայնքային վերակերպումներ»** դրամաշնորհային ծրագրին Չարենցավան համայնքի ներկայացրած ծրագրային հայտը արժանացել է հավանության Հայաստանում նշված նախաձեռնությունն իրականացնող՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանի գրասենյակի կողմից:

Ըստ այդմ, «Չարենցավանի դիրքավորումը որպես տուրիստական ներուժ ունեցող համայնքի կենտրոն» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է բարեկարգել և նոր ֆունկցիոնալություն հաղորդել Վերածնունդ հուշահամալիրի տարածքին՝ ներառյալ Գանգրահեր Տղայի արձանը, հարակից հարթակն ու կանաչապատ գոտին, և կենտրոնական՝ Խանջյան փողոցին, դրանցում ավելացնելով նաև տուրիստական տեղեկատվական բովանդակություն:

Դրամաշնորհի գումարը կազմում է 27,048,692.5 (քսանյոթ միլիոն քառասունութ հազար վեց հարյուր իննսուներկու ամբողջ հինգ տասնորդական) ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնում եմ, որ տվյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակում համայնքի բյուջեից համաֆինանսավորում չի պահանջվում:

Սույնով խնդրում եմ Ձեր աջակցությունը՝ համայնքի բյուջեում նշված փոփոխությունների կատարման համար:

Համայնքապետարանի զարգացման ծրագրերի
և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Ա. Ծերունյան

14 դեկտեմբերի 2022թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «15» 12 2022թ.
Մտից N 6101 Գործ N 21.